

ԱՐՄՅԱՆՍԿ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ՕՐԲԱԶԱՐ, ԱՐՄՅԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ)

Գտնվում է Ղերմի թերակղզու խերսոնի պարանոցի վրա: Ռուսական կայսրության տիրապետության ընթացքում Օրբազարը վերանվանվեց Արմյանսկ կամ Արմյանսկի Բազար: 1779 թ. Եկատերինա Բ կայսրուհու հրովարտակով ալտեզի հայերը վերագաղթում են Ռոսսով, մի մասը՝ Մոլդավիա և Արևմտյան Ուկրաինա: Մինչև 1865 թ. Արմյանսկում ապրել են 500-ից ավելի հայեր: Հետագային եկեղեցին էլ պահպանվել⁸³: 1806 թ. կառուցվածը եղել է «անշան ճարտարապետության», ուստի տեղի հայ աղգարնակչությունը 1861 թ., Գարրիել Այվազյանի առաջնորդության ժամանակ, հանդանակության հավաքելով 16000 ռուբլի, Հարություն Արարյանի և այլ իշխանավորների հոգարարձության կառուցում են խաչածե հատակադժով կաթողիկե եկեղեցի, որն օծվում է 1863 թ. նոյեմբերին: Եկեղեցին ունեցել է երկու մուտք: Արևմուտքից կառուցվել է բարձրադաճ զանգակատուն⁸⁴: Այժմ սրանց հետքերն են մնացել.

Հովհ. Տեր-Արրահամյանի ուսումնասիրության ժամանակ (1860-ական թթ.) տաճարի հյուսիսային պատին եղել է արձանագրված երեք խաչքար. երկուսը ընկած են եղել հին եկեղեցուց: Ահա գրանց վիմագրերը.

365.

Յիշատակ է սուրբ նշանքս Քրիստոսի կողակցին՝ Փաշայ խաթունին, զաւակացն Մարտիրոս սարկաւագին:

Հրատ. Բժշկյան, 241, Տեր-Արրահամյան, Բ, 131:

366.

Յիշատակ է դայս խաչքարս տասնեմեկ պատուհանս ի դուռն սուրբ աստուածածին եկեղեցւոյս Յակոբի որդի Պետի Ղազարայ. թվ. ՌՄԿԳ (1814):

Հրատ. Տեր-Արրահամյան, Բ, 131:

367. Մուտքի բարավորին՝

Նորոգեցաւ տաճարս ամենօրհնալ սրբուհւոյ կուսին արգեամը հայ աղգի ժողովրդոց Օրպազարի, վերակացութեամբ Յարութիւնի Առաւ Օղլուոյ, յաւուրս կայսերութեան ռուսաց Ագեքսանգրի Բ, ի հայրապետութեան ան Մաթէոսի կաթողիկոսի Ա, յառաջնորդութեան տեսն Գարրիելի կայսերապսակ աստուածարան վարդապետի Այվազյան:

Հրատ. Տեր-Արրահամյան, Բ, 131-132:

Արմյանսկի գաղամայլ ընակիչներից մեկը՝ Ֆեոդոր Կոստենկոն, մեզ պատմեց, որ քաղաքի ընդամենի շինքեր, ընդ որում հայոց եկեղեցին և գերեզմանոցը ավերվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, իսկ այժմյան ակումբը կառուցված է տաճարի հիմնապատերի վրա:

ԱՐՄՅԱՆՍԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Գտնվում է քաղաքի հին թաղամասում, մայրուղուց շուրջ 200 մ դեպի արևմուտք: Մարմարակերտ ընդամենի կոթողներից ու գերեզմանաքարերից շատերն այժմ ոչնչացված են, մա-

⁸³ Հովհ. Տեր-Արրահամյան, Բ, էջ 130:

⁸⁴ Նույն տեղում, էջ 131:

սամր ջտրդոտված ե շրջված: Նկատի ունենալով այն պարագան, որ առաջիկայում, քաղաքի ընդարձակման պատճառով, ամրոցը զրկվի ոչնչացվելու և վերանալու է Հայկական գերեմանոցը, նպատակահարմար դառնալ գրանցել հետևյալ արձանագրությունները.

368. Կոթող, սե. մարմարից, կրտսերե եռաստիճուն պատվանդանով: Մի կողմին՝
ХАРИТОНЪ АВАНАСИЕВИЧЪ/ ХАНЧАСОВЪ./ СКОНЧ. 3 ЯНВ.1902 Г.

Մյուսին՝

МАРИЯ ХАРИТОНОВНА/ СОЛЮНИКИО.СКОНЧ. 12 ОКТ. 1900 Г.

Հանդիպակացին՝

ПАРАСКЕВА/ ХАНЧАСОВА./ СКОНЧ. 29 НОЯЕ. 1905 Г.

369. Կոթող, սե. մարմարից, ճղակոտոր ծառի տեսքով, պատվանդանից ընկած ե - ջարդված: Երեսին տգուցված սպիտակ մարմարե սալատախտակին՝

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ ԱՄՈՒՍՆՈՒՑ/ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ/ ԿՆՈՋՆ ՀԵՂԻՆԷԻ/ ԳՐԻ-ԳՈՐԵԱՆ/ ԴԱԻԹԵԱՆԻՆ./ ՈՐ ՎԱԽՃԱՆԵՑԱԽ 1906 Թ. ՀՈԿՏ. 4-ԻՆ:

Ապա՝ ոռւսերեն.

ВЕЧНАЯ ПАМЯТЬ/ НЕЗАВВЕННОЙ ЖЕНЪ ЕЛЕНЪ ГРИГОРЬЕВНЪ/ ДАВИДОВОЙ,СКОНЧАВШЕЙСЯ 4 ОКТ...

370. Կոթող, գորշ գրանիտից, շրջված: Կողին՝ 6 տող.

ՀԱՆԳԻՍՏ/ ԿԱՐԱՊԵՏԻ ՅՕՎԱԿԻՄԵԱՆ/ ՈՐԴԻՈՅ ՍԵՖԵՐԵԱՆՑԻ/ ՎԱԽՃԱՆԵԱԼ 1866 ԱՄԻ/ ՅԱՄՍԵԱՆՆ 18 ՅՈՒՆՈՒԱՐԻ/ Ի ՀԱՍԱԿԻ 5 ԱՄԱՑ:

371. Տապանաքար, սե. մարմարից, վրան՝ թևավոր խաչ, որի տակ՝ 6 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ/ ՄԿՐՏՉԻ

ԱՂԵՔՍԱՆԳՐԵԱՆ/ ՕՐԵՐԵԱՆՑ/ ՎԱԽՃԱՆԵԱԼ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1898/ յ12 ՆՈՅԵՄԲԵՐԻ յ84 ԱՄԻ ԿԵՆԱՑ:

Ապա՝ ոռւսերեն 4 տող.

НИКИТА АЛЕКСАНДРОВИЧЪ/ ОБЕРОВЪ,/ 84 ЛѢТЪ/. СКОНЧАЛСЯ 12 НОЯБРЯ 1898 ГОДА.

372. Տապանաքար, նույնաաիպ, կենտրոնում՝

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ/ ԱՆՆԱՅԻ ՄԻՆԱՍԵԱՆՑ/ ՕՐԵՐԵԱՆՑ. ՎԱՂՃԱՆԵԱԼ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1900/ Ի 29 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 63 ԱՄԻ ԿԵՆԱՑ:

Ապա՝ ոռւսերեն 3 տող.

Анна Минаевна/ Оберова./Скончалась 29 ноября 1900 года 63 лѣтъ.

373. Կոթող, լավ հղկված գորշ գրանիտից, քառակող, նախկին տեղն անհայտ: Մի կողմին՝ 9 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ ԾԱՌԱՅԻ ՕԳՍԵՆՏԻՈՍ ՊԱՅԵԱՆԻ/ ՈՐԳԻՈՅ ԵՂԻԱՅԻ/ ԾՆԵԱԼ 1836 ԱՄԻ/ 22 ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍԻ/ ՎԱԽՃԱՆԵԱԼ 1895 ԱՄԻ/ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻ:

374. Կոթող, սև մարմարից շրջված վիճակում: Վրան՝ կամարաձև 7 առդ.

Здесь покоится прахъ/ возлюбленной/ матери и жены Елизаветы / Давидовны/ Альянаки,/ скончавшейся 10 января 1904г.

Ծանոթ. Ղրիմի Ալանական նշանավոր գերդաստանի ներկայացուցիչներից է:

375. Տապանաքար, գորշ գրանիտից, վրան՝ խաչ, որի աակ՝ 3 առդ.

ԱՅՍ է ՏԱՊԱՆԱԿ/ ԳՐԻՔՈՐ/ ՊՈՂՏԱՆՈՎԻ:

Ծանոթ. Վիմագրում աչքի է զարնում Ա տառի յուրօրինակ գրությունը:

376. Տապանաքար, վրան՝ միաթև խաչ, սառնե՝ 5 առդ.

ՀԱՆԳԻՍՏ/ ՄԱՀՏԵՍԻ ԱՆՆԱՅԻ./ ՈՐ է ԿԻՆ ՄԱՐՏԻՐ/ ՈՍԻ ՄԻԱՍՆԻՔԵԱՆԻ. /ՎԱԽՃ. 1876, 4 ՅՈՒՆՎ.

377. Տապանաքար, նույնաաիպ, նախորդի կողքին, փոքր-ինչ թեքված: Վրան՝ 4 առդ.

ՀԱՆԳԻՍՏ/ ՄԱՀՏԵՍԻ ՄԱՐՏ/ԻՐՈՍԻ ՄԿՐՏԻՋԵԻՈՎ ՄԻԱՍՆԻՔԵԱՆ./ ՎԱԽՃ. 1866 Ա-ՄԻ, 12 ԱՊՐ.

378. Տապանաքար, կոարված. պահպանվել է սառնին մասը: Վրան՝ եղծված 4 առդ.

Ի ԱՅՍ ՏԱՊԱՆ.../ՅԻ, ԴՍՏԵՐ ԱՌՈՊ/ ՕՂԼՈՒԻ, ՈՐ ՀԱՆԳԻ.../ ՄԱՅԻՍԻ:

Ծանոթ: Մեծահարուստ Հարություն Արարյանի դուստրն է:

379. Կոթող, գորշ գրանիտից, քառակող, դերաղանց մշակված շինաքարերով: Մերայցի ժամանակ (1970 թ.) ջարդոռված և շրջված էր փոսի մեջ: Բեկորների համադրումից կարելի է ընթերցել.

ДОРОГОМУ МОЕМУ ОТЦУ/ СИМЕНУ ЕГОРОВИЧУ/ СПЕНДИАРОВУ./ ВЕЧНАЯ ЕМУ ПАМЯТЬ.

380. Տապանաքար, գորշ գրանիտից: Վրան՝ 5 առդ.

ՀԱՆԳԻՍՏ ՅԱՐՈՒԹԻԻՆԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ/ ՎԱՆԼԸԵԱՆԻ./ ՎԱԽՃ. 15 ՄԱՐՏԻ 1874./ Ի ՀԱՍԱԿԻ 75 ԱՄԱՑ:

ԿՐԱՍՆՈՊԵՐԵԿՈՊՍԿ ԵՒ ՋԱՆԿՈՅ

Կրասնոպերեկոպսկ նորակառույց քաղաքի երկրագիտական թանգարանի մուտքի մոտ դրված հուշասալին նշված են գերմանացիների դեմ մարանչած զինվորների անունները, որոնց մեջ կային երկու հայորդիներ.

381.

ա) ЛЕЙТЕНАНТ ГЕВОРКЯН ГАИК ЗУРАВОВИЧ.

բ) ...МИНАСЯН САМСОН ДЖАНКИРОВИЧ.

Հնադույն հուշարձաններ այսպեղ չկան:

Ջանկոյը Ղրիմի երկաթուղային ամենախոշոր հանդուցակետն է: Տեղացիների ասելով՝ հայոց գերեղմանոցը ոչնչացել է ղերմանացիների ոմրկոծության ժամանակ: Այժմյան քաղաքային